

Արձանագրություն հ. 7

ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
20.09.18 թ. կայացած նիստի

Նիստին մասնակցում էին ֆակուլտետի գիտական խորհրդի 36 անդամներից 24-ը:

Օրակարգում՝

1. Գիտական զեկուցում <<Մրցակցություն, հիմնախնդիրները և զարգացման հեռանկարները>> /զեկուցող՝ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Ա.Շաբոյան/:
2. Նոր ընդունված առկա ուսուցմամբ ասպիրանտների ատենախոսությունների թեմաների և գիտական ղեկավարների հաստատում:
3. Ընթացիկ հարցեր:

Բացելով նիստը գիտխորհրդի նախագահ, պրոֆեսոր Հ.Սարգսյանը ներկայացրեց զեկուցողին:

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Ա.Շաբոյանը ներկայացրեց ՀՀ-ում տնտեսական մրցակցության ոլորտում առկա հիմնախնդիրները և մատնանշեց հեռանկարները:

Որոշեցին գիտական զեկուցումը ընդունել ի գիտություն և հետագայում դոկտորական աշխատանքի թեմայի վերնագիրը ճշգրտել: Առաջադրվեց պրոֆ. Վ.Բոստանջյանի թեկնածությունը որպես գիտական խորհրդատու:

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցեցին ամբիոնների վարիչները: Նրանք ներկայացրեցին իրենց ամբիոնի մասնագիտությամբ նոր ընդունված առկա ուսուցմամբ ասպիրանտների թեմաները և գիտական ղեկավարներին:

Որոշեցին հաստատել ամբիոնների նիստերի որոշումները:

Նոր ընդունված առկա ուսուցմամբ ասպիրանտների գիտական ղեկավարների և թեմաների վերաբերյալ տեղեկատվությունը քաղվածքի տեսքով ներկայացվում է ԵՊՀ ասպիրանտուրայի բաժին, մեկ օրինակն էլ պահվում է մեր թղթապանակում:

Ընթացիկ հարցերի շրջանակում հաստատվեց գիտխորհրդի 2018-2019 ու տարվա աշխատանքային պլանը:

Գիտխորհրդի նախագահ,
ու. գ. ղ., պրոֆեսոր



Հ. Լ. Սարգսյան

Գիտխորհրդի քարտուղար,
ու. գ. թ., պրոֆեսոր

Ա. Հ. Համբարձումյան